

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼՎԱՐԻՍ

Տարեկան 12 Տր.

Վեցամսեայ 8 Տր.

ԱՐՏԱՍԱՀԱՆԱՆ

Երկու քիւրակի ծրարով

Տարեկան . . . 14 Տր.

Վեցամսեայ . . . 7 Տր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60 Տոյս

Վեցամսեայ 1. 50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Մանուկանս սողոր
20 ամսիսի



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Գրոցարիւնք եւ լին
տրոսիր

ՍԵՐ ՆՈՐ ԹԵՐԹՈՆԸ

« ԿԱՐՄԻՐ ԾԻԾԱՂ »

Այս թիւով կը սկսինք թէև կարճ բայց շատ հետաքրքրական երկասիրութիւն մը Ռուս-ճարօն պատերազմի կեանքէն առնուած, ԿԱՐՄԻՐ ԾԻԾԱՂ. Յարգելի թարգմանիչին տուած հետեւեալ ծանօթութիւնը մէկ ակնարկով գաղափար մը կուտայ մեր ընթերցողներուն երկին շահեկանութեանը մասին :

Թարգմանարար առաջ եմ բերում համառօտութիւնը ինքնին փոքրածաւալ սի գրքի որը հրդեհեց ամբողջ Ռուսաստանը, ապստամբեցրեց նաւատորմիդը, զօրքը, քանուորդը, զիւղացիին եւ տուեց կառավարութեան անհամար միլիոններով ֆլան : Սա համարում է նաեւ մինչեւ հիմա նկատուած պատերազմական ստորագրութիւնի ամենապերճախօսն ու ազդուն :

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Յայտնի է թէ ամեն քաղաքակրթեալ ազգ ու պետութիւն ունի իր ազգային քաղաքականութիւնը, որուն ուղղութիւնը կուտան, ժամանակին ու պարագաներուն համեմատ, ազգին վեհապետին կամ նախագահին շուրջը հաւաքուած աւագանիները ու նախարարները, որոնք պատասխանատու են ազգին և պարտաւոր են հաշիւ տալ ազգէն ընտրուած երեսփոխաններու առջեւ :

Ամեն ազգի մէջ այս այսպէս է, և առանց որոշ քաղաքական ուղղութեան ոչ մէկ ազգ կամ ժողովուրդ չէ մնացած և չը մնար, եթէ ոչ ալեկոծ ծովուն մէջ զեկը կորուսած նաւու մը ողորմելի վիճակին կը մատնուի :

Սակայն երբ գառնանք մեր ազգին և հարցնենք մենք մեզի : — ո՞րն է մեր ազգային քաղաքականութիւնը կամ ո՞ր է մեր նաւուն զեկը այս փոթորկալից ժա-

մանակներուն մէջ, երբ ամենի ալիքներ մերթ հարաւն և մերթ հիւսիսէն ուղղակի մեր գոյութեան կը սպառնան :

Այս է՛ն կարեւոր հարցումին տըրուելիք պատասխանները բոլորն ալ պատի պատ բաներ են : Էն նպատակաւարմարը յեղափոխութիւնը ըլլալ կը կարծուի. բայց յեղափոխութիւնը ազգային քաղաքականութիւն չէ, այլ ազգ. քաղաքականութիւնը պաշտպանելու կամ առաջ քշելու միջոցներէ մին է : Ինչպէս պետութիւնները ունին իրենց զինուորականութիւնը, Այո՛, թէեւ ամեն ազգի համար իր զինուորականութիւնը, իր բանակը իր հոգին է, իր պաւէնն է, իր յենարանն է, նոյնպէս մեզ համար ալ պէտք է ըլլան յեղափոխ. կաղմակերպութիւնները, բայց և ոչ մէկ ազգի մէջ ազգային քաղաքականութիւնը ու ճակատագիրը չէ յանձնուած միմիայն զինուորականութեան կամքին կամ դատելակերպին : Եթէ այդպէս չըլլար, եթէ ազգերու ճակատագիրը միմիայն փառատենչիկ զինուորականութեան յանձնուած ըլլար, այսօր շատ յետամնաց, շատ ողբալի պիտի ըլլար աշխարհի վիճակը : Որոշ ազգային քաղաքականութիւն մը և խոհուն դիւանագիտութիւն մը իրենց կռնակը ու իրենց հետ չունեցող ամենազօրաւոր բանակներն իսկ պարտութեան ու ջախջախման դատապարտուած են : Այ՛ ո՛ր կը մնան մեր բաժան բաժան եղած յեղափ. տկար կաղմակերպութիւնները, որոնք իրարու ներհակ ուղղութիւններով, ձգդատումներով ու գործերով շատ անգամ թշնամիներ աւելցնելու և աղէտներ բազմապատկելու ծառայած են ու կը ծառայեն ցարդ :

Անգլիացի մեծ հայտնէրը, Մ. Ճէյմս Պալա, անցեալ տարի Սասնոյ դէպքերու մասին խօսելով, « ԱՅ՛ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԱՅՆՁԱՔ ԶՈՐԱՌՈՐ ԶԷԻՆ ՈՐ ՅԱՋՈՂԷԻՆ » ըսաւ : Այդ դաս մըն էր զոր տուաւ մեզ և մասնաւորապէս մեր յեղափոխականութեան : Այսօր ալ նոյն

անձնաւորութիւնը՝ որ Անգլիոյ արդի ազատական նախարարութեան մէկ անդամը ըլլալով, ամբողջ Բրիտանական հզօր պետութեան վարիչներէ մին է, սա խօսքերը կըսէ մեզ :

Այժմ՝ ինչպէս ցարդ՝ պիտի ընեմ ինչ որ կրնամ նպատակու համար Հայց կացութեան բարեփոխան : Բայց մինչեւ որ Ռուսիա չաջակցի մեր ջանքերուն, մեր ջանքերը չեն կրնար յաջողիլ. Իտալիա, Ֆրանսա եւ Անգլիա՝ միացած՝ կրնան բան մը ընել Մակեդոնիոյ համար, բայց Հայաստանի համար՝ երեքը մէկանց չեն կրնար արմատական փոփոխութիւն մը յառաջ բերիլ՝ եթէ Ռուսիա հակառակի. բայց յոյս ունիմ որ Ռուսիա այլ եւս չպիտի հակառակի :

Մ. Ճէյմս Պալա իր այս խօսքերով՝ որ անկեղծ խոստովանութիւն մըն է Եւրոպայի ձեռնհասութեան մասին մեր խնդրոյն համար, մեզ քաղաքական ուղեգիծ մը ցոյց կուտայ, որ պարզ խօսքով սա նշանակութիւնը ունի և ուսու պետութիւնը սիրաշահեցէք, եթէ ոչ ձեր խնդիրը ձեզ նպատաւոր կերպով չը լուծուիր : Այս մեր հետեւելիք քաղաքականութեան համար որոշ ուղեգիծ մըն է, որ պէտք է ազգովին մեր նկատառութեան և խորհրդակցութեան ենթարկուի :

Յարգ. Կովկասի մէջ գոյութիւն ունեցող մեր երկու յեղափոխականութիւնները աւոր հակառակ գործած են, ստ պարզ պատճառու անշուշտ որ Բլէյք և Կալիցին հայ ազգի գոյութեան գէ՛մ դաւադրական քաղաքականութեան մը կը հետեւին : Բայց այժմ այդ հրէշները այլեւ չկան, իրենց քաղաքականութիւնն ալ ջնջուած է : Այսօր նոր Ռուսիա մը կը հիմնուի նոր քաղաքականութեամբ, որ չը կարծուի թէ մեզ աննպատակ ըլլալ ինչպէս որ կըսէ Մ. Պալա ևս բայց յոյս ունի որ Ռուսիա այլ ևս չպիտի հակառակի : Սակայն մենք ի՞նչպէս վստահեցնենք նոր հաստատուելու վրայ եղող Ռուսիան թէ մենք ըստ ամենայնի արժանի պիտի հանդիսանանք իր համակրու-

թեան և աշակցութեան : Այս բանին համար միակ ճամբայ մը կը տեսնեմ ես, այն է մեր յեղափոխականութիւնները յայտարարեն, թէ իրենք ինչպէս սկիզբէն միմիայն ճանկահայոց համար տանելի վիճակ մը ապահովելու նպատակու կազմուած են, այսօր ալ Պետական Տոմայի գումարման օրին, կը դադրին Ռուսիոյ կամ Կովկասի գործերուն խառնուելէ :

Հանդիսաւորապէս և պաշտօնապէս այս յայտարարութիւնը ընելէ յետոյ, մեծ պարտականութիւն մըն ալ կը ծանրանայ Ամենայն Հայոց Կաթողիկոսին վրայ, այն է Համահայկական Համաժողով մը հրաւիրել, մասնակցութեամբ նաեւ յեղ. կաղմակերպութեանց, խորհրդակցելու եւ գծելու համար ազգային քաղաքականութեան մը ուղին, որուն պէտք է հետեւի ամէն հայ ըստ իւր յարմարութեան և կարողութեան :

Եթէ այս միջոցները անյապաղ ձեռք չառնուին, կը կարծեմ թէ, մենք տակաւին շատ կը տուժենք և յուսկէտս կը վատենք մեր ուժերը և արիւնը :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Մ. Ռուվիէի դահլիճին յանկարծական անկումը շատ անպատեհ ժամանակի մը հանդիպեցաւ, երբ անդին Ալ-ժէզիրասի դեսպանախորհուրդէն բանակցութեանց խղուսի եւ հետեւորար Յրանսայի եւ Գերմանիոյ միջեւ թըշնամութիւնը սկսելու լուրին կը սպասուէր մէկ ժամէն միւսը : Եւ քնակահապէս շատ գէշ կազդէր դահլիճին անկման լուրը ոչ թէ միայն Յրանսայի պատուիրակներուն այլ նոյն իսկ Յրանսայի համակիր օտար պատուիրակներուն վրայ :

Բայց անպատեհ ժամու մը մէջ դահլիճին հրաժարումին յանցանքը չէ կարելի վերագրել Մ. Ռուվիէին. որովհետեւ զինք հրաժարման հարկին հնթարկողը երեսփոխանութիւնն էր, որ 234 ձայնի դէմ, 267 ձայնով տեսակ մը անվստահութիւն յայտնեց նախարար-

ընթացումը դեմ է Ասոր վրայ ալը օրը նստում յանցանքն էր եկեղեցիներու գոյքերուն ցուցակագրութեան գործողութիւններուն մէջ քիչ մը խիստ վարուիլը . երբեմն տեղեւոր մէջ եկեղեցիներուն գոյքերը ցուցակագրելու ցող պաշտօնեաները եւ ոստիկանները քարերով ու փայտերով ընդունուեցան մաս մը ժողովուրդի կողմէ . երբեմն տեղեւոր եկեղեցիները ամրացուցին ու ներս չընդունեցին եկող պաշտօնեաները . գտնուեցան սպաններ որոնք ցուցարարներուն դէմ յառաջանալ մերժեցին, մէկ քանի տեղեր ալ լիբաւորեալներ եւ մեռնողներ եղան : Այս դէպքերը բաւական եղան կետերը, ընկերավարականները եւ արմատական ընկերավարական երեսփոխաններէն մաս մը միացնելու Մ. Ռուսիոյ դէմ, որ արդէն նոյն իսկ իր պաշտօնակիցներէն մէկ մասին ալ հաճելի ըլլալէ դադրած էր :

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ

Անգլիոյ էտուարը թագաւորին Պիտիք երթալու ատեն անպաշտօն կերպիւ Բարիզ հանդիպելու եւ մանաւանդ անգլիական ղեսպանատանը մէջ Մ. Լուպէին եւ Մ. Տէլգաւսէին հետ մտերմական տեսակցութիւնը ու զանոնք ճաշի հըրաւիրելը շատ մը ենթադրութիւններու դուռ բացին : Մարտիան խնդրոյն այս տաք միջոցին, ծանօթ անգլիո-ֆրանսէ համաձայնութեան ծնունդ տուող եւ Գերմանիան մեկուսացնել փորձող Տէլգաւսէին սա անպաշտօն եղած միջոցին Անգլիոյ թագաւորէն մտերմօրէն ընդունուիլը շատեր ցոյց մը կը նկատեն Գերմանիոյ դէմ, ասոր հասկցնելու համար թէ Տէլգաւսէին մշակած հակաբերման ծրագրին Անգլիան համակիր է եւ ճիշդ այդ քաղաքականութիւնը կը շարունակեն Անգլիա եւ Ֆրանսա ընդդէմ Գերմանիոյ յոխորտանքին, որմէն վախճալու պատճառ չունին Ֆրանսա, որովհետեւ Անգլիա իր հետն է :

ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԸ ՎՏԱՆԳԸ

Այլեւս սկսած են լուրջ դիւանագէտներ աշխարհաւեր պատերազմի մը վը-

րանգը անհնել Մարտի խնդրոյն մէջ համաձայնութիւն չը գոյանալու պարագային :

Գերմանիա երբ կը յամարէ Մարտի մէջ Ֆրանսային մասնաւոր շահերը եւ առաւելակցութիւնը գործնականապէս ճանչնալ չուզելու իր պնդումին վրայ, անխուսափելի կը նկատուի պատերազմը երկուքին մէջ : Բայց գործը այս երկուքին մէջ ալ չպիտի սահմանափակուի, քանի որ Անգլիա ալ կուզէ որ իրեն Ֆրանսայի փոխանցած իրաւունքը յարգուի, ու երբ Գերմանիա այդ կը մերժէ, ու զէնք կը բարձրացնէ ատոր համար, Անգլիա կը պարտաւորուի ինքն ալ զէնքի դիմել եւ Ֆրանսայի հետ ուս ուսի տուած պատերազմի Գերմանիոյ դէմ. տարբեր կերպով Անգլիա Ֆրանսայի կեղծ դրամ քնդի մը տպաւորութիւն պիտի թողու : Իսկ ասոնք Գերմանիոյ երկու զինակիցները, Աւստրիա եւ Իտալիա, ըստ պայմանագրութեան պնդուած են զէնքով օգնել Գերմանիոյ, քանի որ երրորդ պետութիւն մը կաշակցի իմ թշնամիին. թէեւ կարծողներ կան թէ Աւստրիա եւ Իտալիա այս պարագային պարտաւորեալ չեն զէնքով օգնելու, քանի որ Գերմանիոյ ընթացքը Մարտի խնդրոյն մէջ վերաւորիչ է Ֆրանսայի եւ Անգլիոյ միացնելու, ուստի ինքն է որ այս երկու պետութիւններուն դէմ պատերազմելու վիճակին մէջ դրած է ինքզինքը, ոչ թէ Անգլիա իբր երրորդ մը Ֆրանսայի կ'օգնէ, այլ իբր իր իսկ իրաւունքը պաշտպանող հակառակորդ մը Գերմանիոյ : Իսկ եթէ այս փափուկ կէտը ուղղութեան շառնելով ինչ որ յուսալի չէ—Աւստրիա եւ Իտալիա օգնեն Գերմանիոյ, ասոնք Ռուսիա եւս պարտաւոր է Գերմանիոյ վրայ քաշելու : Եւ այս պարագային վեց մեծ պետութիւններ պատերազմի բռնուելով արդի կատարելագործեալ զէնքերով, աշխարհը մատնուած կըլլայ այն տեսակ աղէտի մը, որուն նմանը չէ տեսնուած ցարդ. իսկ հետեւանքներու մասին մտածելն իսկ սարսափելի է :

Մեր յարգոյ բաժանորդներէն կը խնդրենք որ յիշեն թէ իրենց բաժնեկիցները չեն զրկած, և հաճին զրկել : մանաւանդ անցեալ տարուէն պարտք ունեցողները :

Ընթերցող մտեցնել եւ շուտով նրա անգոյթ ճառագայթներէն պիտի այրուէր, մոխիր դառնար : Մեր աչքերը դադարել էին տեսնալուց :

Արտասովոր, մօտ եւ կատաղի արեգակը, իւրաքանչիւր հրացանափողի եւ արծաթակուռ մետաղի վրայ վառել էր հաղաւորաւոր փոքր կուրացուցիչ արեգներ եւս, եւ որոնք բոցավառ եւ սուր, որպէս սուրիններ ծայրեր մեր աչքերն էին խրուում ամեն կողմից : Սպառնչ կիզիչ սոթը թափանցում էր մեր մարմինը, ոսկորներն ու ուղեղը : Երբեմն թուում էր, որ իմ ուսերի վրայ երեւողը գլուխ չէր, հապա մի օտարտի տարօրինակ զուռ, որը մի ուրիշի է պատկանում, եւ ստեղծելի . . .

Եւ հապա—հապա իմ առջեւ պատկերացաւ իմ տունը, գրասենեակս, նրա պատի բաց-կապոյտ թուղթը, եւ ջրի շիշ սեղանի վրայ—մի սեղան որ մի ոտքը լինելով միւսներէն կարճ ունէր իրա տակ ծաղուած մի թղթի կտոր, միւս սենեակուին էին իմ կինը եւ երախան, որոնք չէին անհուճ : Պիտի բաղադրանքի ելի, այդ անհուճ բաւականաչափ ոյժ ունենային—այնքան որոշ օքանչելի եւ

ՃԱՇԿԵՐՈՅԹ

Ի ՊԱՏԻԻ

ՃԵՑՄ ՊՐԱՅՄ

Փետրուար 23 ի Ուրբաթ օրը, Լոստոն, Ուէսթմինսթ փալէս Հոթէլին մէջ, տեղի ունեցաւ միջազգային խորհրդաժողով մը, կազմակերպուած Արեւելեան հարցի Միջազգային Ընկերակցութենէն ի նպաստ Օսմ. Պետութեան կեղեքեալ ժողովուրդներուն, իրիկունը հացկերոյթ մը տրուեցաւ ի պատիւ Ճէյմս Պրայսի՝ իր նախարար ընտրութեան առթիւ :

Խորհրդաժողովին ու հացկերոյթին ներկայ գտնուեցան Լոնտոնաբնակ Հայոց մէջ Պ. Պ. Յ. Յակոբեան եւ Ն. Մոստիշեան, փարզաբնակ Հայոց մէջ Պ. Պ. Յ. Իսկէնտէր եւ Ա. Չօպանեան : Պ. Չօպան, որ նմանապէս հրաւիրուած էր չէր կրցած գալ իր առողջական վիճակին պատճառով :

Խորհրդաժողովին հրաւիրուած էին ոչ միայն շատ մը անգլիացի կարեւոր անձնաւորութիւններ, այլ եւ Ֆրանսայի եւ Իտալիոյ քաղաքական, գրական ու գիտական մեծ դէմքերէն շատերը : Պետադպրոց, Մարտի հարցը ինչպէս եւ ուրիշ սահմանափակ յայտնութիւն ունեցող խնդիրներ արդիւնք էին շատերը՝ ներկայ գտնուելէ : Իտալիայէն ոչ ոք եկած էր, Ֆրանսայէն՝ միայն Պարոն տիւսթուրնէլ տը Բօնսման, փէր Բիյար եւ Ժան Լոնկէ, Նոյն օրը, անգլիական խորհրդարանին մէջ՝ Թրանսվայի մէջ չինացի գործաւորներու կարեւոր հարցը յարուցուած ըլլալով, երեսփոխաններէն շատերը չէին կրցած գալ խորհրդաժողովին : Ներկայ էին Սաութուորթի եպիսկոպոսը Լորտ Սթանմոր, Պ. Սթիվենսըն, նախագահ անգլիո-հայկական ընկերակցութեան, Պ. Նօէլ Պրէսթըն, Տր. Բէյնոլտ, Վանայ բաղձախատ ամերիկացի միսիօնարը, իւզ. Ա. Մ. Ֆերպէրն, Մաք Բոլ կանոնիկոսը, Փրօֆ. Ակար Պիթ, Ի. Վ. Ա. Մուր, Բաղձաթիւ անձնաւորութիւններ, ինչպէս Պէրթըլ, Անաթօլ Ֆրանս, Տընի Բոչէն,

եւն. համակրական նամակներ ուղղած էին, յայտնելով իրենց ջերմ սրտակցութիւնը խորհրդաժողովը կազմակերպողներուն հետ. Պ. տիւսթուրնէլ տը Բօնսման, որ կը նախագահէր, ու վերեւ յիշուած բոլոր անգլիացի անձնաւորութիւնները, խօսք առին՝ բացատրելու համար, անգամ մը եւս, անհրաժեշտութիւնը Օսմ. Պետութեան կեղեքեալ ժողովուրդներուն դատարմատապէս լուծելու չգրեթէ բոլոր բանախօսները շնչեցին մասնաւորապէս հայկական հարցին վրայ) Պ. Յակոբեան շնորհակալութեան քուէ առաջարկեց Պ. տիւսթուրնէլ տը Բօնսմանին, եւ յետոյ դառնութիւն յայտնեց որ հակառակ Հայոց թափած այնքան արիւնին եւ Եւրոպացի հայաստէրներ տարիններէ ի վեր կատարած ջանքերուն հայ ժողովրդին կացութիւնը ոչ միայն չէ բարւոքուած, այլ տոնապատիկ աւելի վատթարացած է քան 1676 ին, Պ. տիւսթուրնէլ տը Գօնսման, պատասխանելով Պ. Յակոբեանին, հասկանալի գտաւ հայոց զգացած դառնութիւնը, բայց ըսաւ պէտք չէ վատիւր : Եւրոպան ցարդ պառակտուած ըլլալով, կարող չէր արեւելեան հարցը լուծել, այժմ, Եւրոպայի աղատական ազգերը սերտ բարեկամութեամբ կապուած են, ու Եւրոպա պիտի սկսի կարող ըլլալ այդ հարցը լուծելու :

Հացկերոյթը շատ չքեղ ու փառաւոր արտայայտութիւն մը եղաւ յարգանքի դէպի Ճէյմս Պրայս եւ համակրութեան դէպի Օսմ. Պետութեան կեղեքեալ ժողովուրդները (Հայաստան, Մակեդոնիա, Կիւսէ), Պ. Սթիվենսըն կը նախագահէր, ներկայ էին հարիւր յիսունի մօտ անձնաւորութիւններ, Լորտ Պրայս, Դոն Լիֆֆը, Փրօֆ. Մահաֆի, Լորտ Մինքսֆըլ, Մուր, Պ. Միլթոն, Լորտ Նորթպլըն, Փ. Բիյար, տիւսթուրնէլ տը Բօնսման, Լորտ Սթանմոր, Դուան, Սաութուորթի եպիսկոպոսը, Սերպիոյ, Պուլկարիոյ, Յունաստանի ղեսպաններ, Սեր Ճօն Բէնաուէյ, Նօէլ Պրէսթըն, Ակար Պիթ, եւն. եւն. Բաժապաճաբ արտասանեցին Սեր Ճօն Սթուէլ, Լորտ Նորթպլըն, Սեր Ճօն Բէնաուէյ, տիւսթուրնէլ տը Բօնսման

առջեւից շարժուող զանգուածի ինչ լինելը :

Յանկարծ ձախ կողմի բլուրներէ մէկից գոռաց մի թնգանթ, նրան հետեւեցին երկու եւս, ինչպէս արձագանք եւ մի ուրիշ հաճելի աղմուկով եւ շնչեցողով մեր գլխի վերից թռաւ գնաց մի կողմ :

Մերենները դիրք էին գրաւում եւ պատրաստում պատասխանել : Բոպէպէս չըացան ինձանից սպանիչ սոթը, վախն ու յոգնութիւնը, իմ ուղեղը պարզեց եւ միտքս սկսեց գործել աւելի որոշ եւ սուր : Ծնչասպառ վաղ տալով հասայ զառիվեր բարձրացող մարդկային ամբոխին : Նրանց դէմքերի արտայայտութիւնը խաղաղ էր եւ կարելի է ասել ուրախ, լուռ էր խուլ բայց բարձր ձայներ, հրամաններ եւ հանաքներ : Արեգակը կարծես բարձրացել հեռացել էր երկրից : Նա նսեմացել էր, հանգարտել եւ իսկի մեզ չէր խանգարում, եւ անա մի ուրիշ եւս կայծակի պէս պատուեց օդը եւ ուրախ խաչացող թռաւ մեր վերեւից :

Ես առաջ անցայ :

ՀԱՏՈՒԱՄ Բ.

Երրորդ օրը երեկոյան, մեր 12րդ.

ԻՐԱՆԻՆԻՔԻ ԹԵՐԹՈՆԸ

ԳԻՐԵՑ

ԹԱՐԳՄԱԼԵՑ

160ԵՐՏԱՍ ԱՆԴՐԵՎԻՑ

ԱՍԵՓԱՆ ՏՈՒԽԱՆ

ԿԱՐՄԻՐ ԾԻԾԱՂ

ՀԱՏՈՒԱՄ Ա.

Սարսափ եւ մոլեգնութիւն : Առաջին անգամը լինելով սրանք զգալի եղան ինձ, երբ մենք գնում էինք յառաջ—քալում շարունակ տասը ժամ առանց դադար առնելու, միեւնոյն տրագուծեամբ, եւ թողնում ընկողները թշնամիին, որը մեծ բազմութեամբ գայիս էր մեր ետեւից, միայն երեք կամ չորս ժամ հեռաւորութեամբ :

Սաստիկ սոթ էր : Չեմ իմանում աստիճանը քանի էր,—120, 140 թէ աւելի—այսքանն եմ իմանում միայն, որ ջերմութիւնն էր անդադար, յուսաւորեցուցիչ եւ մարմնոյ խոր թափանձող Այնքան արտասովոր, կատաղի եւ ահելի էր արեգակը որ կարծես երկիրը ձգուել էր դէպի նա, բո-

Պետերի Գլխարկի, Մաք քո լ, ձէյմս Պրայս, Փրոֆ. Մահաթի. Պ. Միլայթո- վիչ, Նոէլ Պրեմիլըն : Ամէնքն ալ տոյ եւ այլ ձեւերով համաձայն էին Օսմ. Պետութեան արդի խայտառակ կա- ցութիւնը բարեփոխելու անհրաժեշ- տութեանը մասին :

Պ. Միլայթոյի, Սերպ. յայտնելէ յե- տոյ սերպ ազգին երախտագրութիւնը Անգլիոյ, շատ սրտաշարժ ակնարկու- թիւն մը ըրաւ. Հայոց դատին, եղբայ- րական մաղթանքով մը որ արդարու- թիւնը յաղթանակէ նաեւ բռնութեան այդ վերջին եւ ամենազգայն զոհին՝ Հայութեան՝ ի նպաստ :

Հայ հեռաւոր գաղութներէն՝ միայն Աղեքսանդրիոյ հայ գաղութը խորհած էր երախտագրական հեռագիր մը ուղ- ղել Պ. Պրայսին :

Պ. Իսթէնտըր, քանի մը վայելուչ ու զգայուն խօսքերով արտայայտեց ե- րախտագրութիւնն ու սէրը զոր հայ ժողովուրդը կը զգայ դէպի ի Պ. Պրայս, քէպ ի այդ մեծ հայասէրը, որ առաջին Եւրոպացին եղած է Արեւմտեւոր մէջ լրջօրէն Հայոց հարցով զբաղող, որ այդ հարցը ուսումնասիրած է խորապէս եւ անոր արդարութիւնը հիմնովին հաս- կըցած եւ իր մեծ հեղինակութեամբ զայն հասկցուցած է ամբողջ Անգլիա- յին, որ հիմնադիր եղած է հայկական զատին մեծ ծառայութիւններ մատու- ցանող անգլո-հայկական ընկերակցու- թեան եւ երեսուն տարիէ ի վեր ամէն ձեւով եւ ամենայն անձնութեամբ աշխատած է, ի նպաստ տառապալմ Հա- յութեան :

Տիար Չօպանեան եւս բաժակաճառ մը արտասանելով, յիշեց 15 դար առաջ նոյն օրուան զուգահեռ Վարդանանց յաղթանակը ընդդէմ բոսնական Սասանեան, Այսօր ալ ռուս անուանով սասանեան մը կայ ըրաւ, ակնարկելով Սուլթանին, որուն «քստմենի լուծին տակ տառապող ժո- ղովուրդներէն ոչ մէկն այնքան ա- հաւորապէս չէ չարչարուած որքան հայ ժողովուրդը »:

«Հայերը, ըսաւ, աշխարհակալ ձեռ- տուցանել չէ որ մղուած են. ոչ մէ- կուն չահերուն վնասել չէ իրենց նը- պատակը. կուզեն որ իրենց պահանջ- ները, որ օրինաւոր են նկատուած

բախուածից յետոյ, մնացել էր միայն երեք թնդանօթ միւս բոլորը անգոր- ծածելիութեան զատապարտուած վեց մարդիկ եւ մի օֆիցէր, եւ ինքս : Մինք ամբողջ 20 ժամ ոչ քնել էինք եւ ոչ էլ մի բան կերել : Ամբողջ երեք գիշեր եւ ցորեկ զիւային գո- ռուսին ու բղաւունքն էր պատել մեզ : Մի խնդրագրեցուցիչ միջոցորտ ան- ջատել էր մեզ, մեզանից, երկնից եւ երկնից եւ մենք ողջ մնացածներս չըջու՞մ էինք որպէս լուսնոտներ : Մեծնողները հանգիստ պառկել էին, քսկ մենք չըջու՞մ եւ մեր պարտա- կանութիւնն էինք կատարում. խօ- սելով եւ ծիծաղելով որպէս յիմար- ներ :

Օրորող թէ չորրորդ գիշերն էր,— լաւ չեմ յիշում որ մինը— որ մի րոպէով պառկեցի մի թոււորի ետեւ եւ հագիւ փակել էի իմ աչքերը երբ էլի նրանց առջեւ պարզեց միեւնոյն արտասովոր տեսարանը—պատի բաց- կապոյտ թուղթը եւ փոշոտ ջրի շի- ջը իմ սեղանի վրայ : Մինչդեռ միւս սենեակում թէեւ նրանց չէի տես- նում—էին իմ կիներ եւ երախտ : Այս անգամ սեղանի վրայ վառուած էր լամպ, որով պէտք էր երեկոյ կամ

Պէտլինի զայնազարդ եւ անկից բղ- խած միջազգային բոլոր իջորդմա- զրերով, լրջօրէն եւ խմբով զարմարեց- նա թէ հայկական հարցին արմատական լուծումը, բաժնելով Օսմ. Պետու- թեան սփնէն ծանր վերքերին մին, օգտակար կրնայ ըլլալ այդ պետու- թեան ամբողջութեան եւ բանալ Ա- րեւելքի համար վերանորոգման թուա- կանը »:

Եւ վերջացուց իր ճառը երախտագ- տութիւն յայտնելով հայ դատի բոլոր պաշտպաններուն եւ ժամաւորապէս Մ. ձէյմս Պրայսի :

Հացկերոյթէն յետոյ հայ պատգա- մաւորները անձնապէս ալ յայտնեցին Պ. Պրայսին իրենց յարգանքն ու շնորհաւորութիւնը : Պ. Պրայս ըսաւ անոնցմէ մէկուն հետեւեալ խօսքերը զոր օգտակար կը նկատենք բառ առ բառ կրկնել այստեղ .

«Այժմ ինչպէս ցարդ՝ պիտի ընեմ ինչ որ կրնամ նպաստելու համար Հայոց կացութեան բարւոքման : Բայց մինչեւ որ Ռուսիա չաջակցի մեր ջան- քերուն, մեր ջանքերը չեն կրնար յաջողիլ. Իտալիա, Ֆրանսա եւ Անգ- լիա՝ իրենց իրենց կրնան բան մը ընել Մակեդոնիոյ համար, բայց Հայաստա- նի համար՝ երեք մէկանց չեն կր- նար արմատական փոփոխութիւն մը յառաջ բերել՝ եթէ Ռուսիա հակառա- կի. բայց յոյս ունիմ որ Ռուսիա այլ եւս չպիտի հակառակի »:

Բաղ. «ԱՆԱՆՆՏ»

ԿՈՎԿԱՍՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Տփղիսի մէջ փետր. 20 ին փոխ- արքայի պալատին մէջ առաջին նիս- տը տեղի ունեցաւ Անգլիոյ վարչապետի հայ եւ թուրք ժողովուրդներու կողմէ ընտրուած պատգամաւորներու համա- ժողովին փոխարքային օգնականներու Տփղիսի, Երեւանի եւ Գանձակի նո- հապապետներ ալ ներկայ էին : Փոխ- արքան ինք ճառով մը ժողովը բացաւ եւ ի մէջ այլոց ըսաւ «խնդիրը խո- վութեանց յանցանքները փնտռելու

գիշեր, եղած լինէր : Բաց արի իմ աչքերը, տեսայ մոայլ երկնակամարը եւ նրանում բեւեռ- ուած բոցավառ բծերը եւ էլի փա- կելով նրանց տեսայ միեւնոյն տե- սարանը : Այս անգամ լսեցի իմ սը- ղու ձայնը եւ զարմացայ թէ ին- չու նա գեալ չէր քնացել, որովհե- տեւ գիշեր էր եւ նրան անկողին զը- նալու ժամանակ : Յանկարծ ինձանից ոչ այնքան հեռու պայթեց մի ուռմը եւ ցնցեց իմ քունքները : Մէկը բղաւեց, աւելի բարձր քան ուռմը պայթեց : «ձէք պայմանուց » ասա- ցի եւ ինձ առանց վեր կենալու եւ աչքերէս հեռացնելու բաց-կապոյտ թուղթն ու ջրի շիջը :

Ի վերջոյ վեր կացայ, չըմագայեց՝ պատուէրներ տուի, մարդկանց դէմ- քը քնեցի եւ աչքից անցկացրի թնդանօթները միեւնոյն ժամանակ ե- րախտի դեռ քնած չլինելուն գար- մանալով :

Հաղիւ լուսացել էր եւ հաւ սկսեց բողբոջիկ անսպասելի մի տեղա- տարափ անձրեւ եւ որպէսզի չըթը- չուինք վերջացրինք կրակել, թողինք թնդանօթները եւ սկսեցինք պտտ- պարելու տեղ փնտռել :

վրայ չէ, այլ այն է թէ ինչ միջոց- ներով կարելի է առջեւ առնել եր- կիրը նիւթականապէս քայքայող չա- րերին »:

Հայ եւ թուրք պատգամաւորները վիճաբանութեան սկսան, Հայերը պահանջեցին նախ չարիքին պատ- ճառները մասնանշել, որպէսզի նոր չա- րերին առաջը կարելի ըլլայ առնել. թուրքերը խոյս տուին այդ պահան- ջէն, առարկելով թէ բուն խնդիրէն շատ կը հեռանան : Անոնք պատասխա- նատուութիւնը հայ. յեղ. Դանիակցու- թեան վրայ ծանրացնել փորձեցին. հայերն ալ համարաւորութիւնը եւ մա- նաւանդ տեղական կառավարութեանց թուրքութիւնը մեղադրեցին : Ատոր ի պատասխան թուրքերը միշտ կառա- վարութիւնը անմեղ կը հռչակէին, ո- րով կը մատնէին կառավարութեան մաս մը պաշտօնեաներու եւ իրենց մէջ գոյութիւն ունեցող ոճրագործա- կան համաձայնութիւնը :

Զօրավար Մալախ եւս՝ որ փոխ- արքային փոխանորդաբար կը նախա- գահէր ժողովին, ըսաւ, «Մենք յան- ցաւորը չենք փնտռի կոր, այլ մէ ինչպէս ընենք, որ մօտաւոր ապագան ապահովուած ըլլայ »:

Որոշուեցաւ որ թէ հայերը եւ թէ՛ թուրքերը մասնաւոր խորհրդակցու- թեամբ ծրագրենք զենք եւ ժողո- վին ներկայացնեն :

—Գանձակի ձիւնաշիր գաւառի հայ եւ իսլամ ներկայացուցիչները հաշ- տութիւն կայացուցին եւ Բնակիչ- ներու մեծ մասը սկսեցին դաշտային աշխատութեանց :

—Նախիջնի կրճաղներ թէ գնդա- պետ վրեժներ կորը թնդանօթներով ուժակոծեցին Գառնաւում հայ գիւղը, ուր բնակիչ չկայ եղբ. նոյնպէս Շէք գիւղը ուժակոծուեցին է եւ քանի մը տուներ կործանեցին :

—Գալկաս թերթը՝ որ թրքաւէրներու սեփականութիւն է, կրճաւայ թէ փետր. 13 ի գիշերը Գանձակի գաւա- ռի Զարաթիւս գիւղի հայերը յար- ձակած են Շաքարալէկի գիւղի մահ- լիտականներուն վրայ եւ հրացանաձը- գութեան սկսած : Թուրքերը չուտով օգնութիւն ստանալով Գասպար գիւ- ղէն ետ մղած են հայերը, որոնց մէջ

Հէնց այդ միջոցին իմ առջեւ կանգ- նեց մի երիտասարդ կամագիւնուոր եւ ձեռքը գտադին բռնած յայտարա- րեց, որ ընդհանուր հրամանաւոր հրամայում է մեր գիւղը պահել երկու ժամ եւս, երբ պիտի տեղի ունենար պահակափոխութիւն : Ես միաժամա- նակ զարմանալով իմ երախտի քնած չըլլալուն յայտնեցի իմ պատրաստա- կանութիւնը մեր զիւրքը պահելու արքան ձաւանակ որքան նա էր ցան- կանում : Եւ յանկարծ իմ ուղղորդ- թիւնս գրաւեց երիտասարդի դէմքը : Զէի տեսել այնքան գունատ, սպի- տակամ մի դէմք, որքան նրան էր : Աւելի գունատ քան մեռելներինը : Են- թաղեցի, որ նա ճանապարհու՞մ վախեցել էր եւ մի կերպ չէր կարո- ղանում սթափիլ, որ ձեռքը գտադին կպցրած պահելով նա միայն ջանք էր ի գործ դնում իրանից այդ յիմարա- ցնող վախը մէկդի վանելու :

Վախեցել ետ հարցրի նրա ար- մուկին դպելով : Մակայն նա կարծես չինուած լինէր փայտից : Նա միայն ծիծաղեց եւ մնաց լուռ, աւելի ճիշդն ասած նրա շրթներն էին միայն չարժում ծիծաղի ձեւով, իսկ նրա աչքերը լինէին սարսափով եւ վա-

ճանցուեցին անտառապահ ձաւախեաց : —Զանգեզուրէն եւ վանք գիւղէն մասնաւոր հեռագիրներ հասած են Տփղիս, թէ թուրք գիւղացիները զինու- ւած դիմադրութիւն են ցոյց տուել խաղախներին կարծելով թէ անպատիժ պիտի մնան : Խաղախները թնդանօ- թով պաշտօնականներ են անոնց, տու- ներ կործանեցին եւ մարդիկ գոհուեցին : Հեռագիրն մէջ յայտնուած է, թէ թուրքերը վճռել են դիմադրել ու ղէն, քը վար չգնել : Ցաւտլի է Հայերու գրութիւնը, ասոնք զինաթափ կըլլան, իսկ թուրքերը զենքով կը դիմադրեն նոյնիսկ խաղախներուն :

—Պագուէն փետր. 14 թուականը «Նոր-Դար»ին գրուած նամակ մը խիստ անապահով կը ներկայացնէ այդ քա- ղաքի վիճակը. յայտնի գողութիւններ ու աւազակութիւններ կը գործուին եղբ. փողոցներուն մէջ : Առեւտուրը մեռաւ վիճակի մէջ է, վաճառական- ները գաղթել կը մտածեն : Շատ խա- նութներ ու տուներ պարսպ են : Թուրքերուն վնասը անագին է. կրսէ, չնորհիւ իրենց անհանգստութեան : Հայերը թուրքերու տուները չեն վարձել, կը վախանան, որովհետեւ թուրքերու մէջ նորէն դադարի ժո- ղովներ կըլլան եղբ. իսկ Հրեաները, կրսէ, որոնք վերջին ժամանակներս կարծես թուրքերի հետ դաշակից են դառել, թուրքի թաղերն են մանուկ : Այդ հրեաները թուրքերուն ուսմը կը պատրաստեն եղբ. թուրքերը շատ ա- ժան վարձով, նոյնիսկ ձրի տուն տալ կը ջանան հայերուն, բայց ինչ նպա- տակաւ. արդեօք անկեղծ հայտութեան համար, թէ ապագայ զոհերու թիւը բազմապատկելու մտքով :

ԱԶԳԱՅԻՆ

Ռուսչուգի թագ. Խորհուրդը արդէն իսկ նպատաւոր պատաս- խան տուած ըլլալով տեղոյս թա- ղականութեան՝ առաջնորդական խնդրոյն առթիւ, և ատով ամ- բողջ Պուկարահայութեան հա- ճութիւնը առնուած նկատելով,

խով, այսչափ միայն եւ ուրիշ ոչինչ և «Վախեցե՛լ ես» կրկնեցի մարդասի- րաբար :

Նրա շրթները դողացին կարծես ու- զու՞մ էին կուլմի մի բառ, եւ հէնց այդ րոպէին մի ինչ, որ անըմբռնելի, գերե- նական եւ սոսկալի դէպք տեղի ունե- ցաւ : Ես իմ ալ այտի վրայ զգացի մի առաք հոսանք, որը ինձ սարսափեցրեց, եւ ալղչափ :

Սպիտակ դէմքի փոխան այժմ տես- նում եմ մի ինչ, որ կյոք, կապոյտ եւ կարմիր բան եւ գրանից յորդառատ հո- տում է արիւնը. որպէս դեռ նոր բա- ցուած չիլից, եւ այդ կյոք, կոշտ, եւ կարմիր հոսող «բառը» կարծես զիս ծի- ծաղում էր—մի ծիծաղ առանց ատա- մի—մի կարմիր ծիծաղ :

Ես ճանաչեցի նրան—այդ կարմիր ծիծաղին : Ես երկար նրան էի որոնում եւ աժմ գտել—այդ կարմիր ծիծաղին : Ես հիմա եմ հասկանում թէ ինչ կար- յան բոլոր խնդած բղկումած, եւ այ- յանգաւորուած մարմիններում նրանցում ինչպէս եւ երկնքում ու արեգակում կար մի կարմիր ծիծաղ, որը չուտով պիտի տիրէր ամբողջ աշխարհը—այդ կարմիր ծիծաղը :

(Շարունակելի)

պաշտօնական դիմումները սկսած են :

—Շնորհակալութեամբ և սեփականութեամբ ստացանք Պուգրէշի մէջ Գամիր-Արշաւիրի հրատարակել սկսած ռուսական թերթերը : Ամիսը երեք անգամ կը հրատարակուի այս թերթը, իրեն նպատակ ունենալով ազգային զգացումը վառել և հայութիւնը իր ամէն կողմերով ճանչցնել ռուսական հայոց, որոնք դժբաղդաբար մայրենի լեզուն կորուսած և անգիտակ մնացած են հայութեան անցեալի և ներկայի մասին : Ապահով ենք թէ Գամիր-Արշաւիր ձեռնհասօրէն պիտի կրնայ իր խոստումը կատարել ուստի մեզ կը մնայ մաղթել յաւրասեղութիւն և յաջողութիւն :

ՀԱՎԱՏՈՒՄ

ԹԻԻՐՔԻՍ

Թիւրքիայի իտալ օլընան էնէպի մալարընա 100 տէ 3 կէօմրիկ արթմասը մէսէլէսինէ տայիը՝ Սթանպուլի էլէիէր կէլէն ճուսի էրթէսի կիւնիւ թօլանարադ իթիշարէ իթտիւէր, վէ շու նէթիճէյէ կէլտիւէրքի՝ կէօմրիկ վաճառման հասըլ օլան վարտաթը Մաքէթոնիանըն իւլ Վիլայէթիւնիտէքի մէմուրարըն մաալընա թախսիս օլընսըն վէ տօղրուտան տօղրու մէզքիւր Վիլայէթիւնի խազինէլէրինէ թէսլիմ վէրիւնի, Պու խուսուտա ինկիլիզ էլիսիւնի տախի րազի իթմէյէ չալը շըլսըն, ինկիլթէրանըն պու գարարա հիւսնիւ րիզա կէօթէլէնէկի մէմուլ օլընիյօր :

Շու հաւտէ Մաքէթոնիատա մէմուրարըն մաալթընը թէէմին իշիւն տիկէր Վիլայէթիւնի էհալիսի իւզէրինէ եէնի պիր վէրկի եիւլէնիյօր :

—Եռնանիստանտան Մաքէթոնիայա եէնի չէթալար կիրէճէկինտէն թիւրք հիւքիւմէթի գօնսօլսլարը վասիթասը իլէ խապէր ալմըլ օլմաղլէ, պիր նօթա իլէ Եռնանի նազըրընա չիքիայէթ իթմիշ տիր : Եռնանի նազըրը հէր նէ դատար ինքեարա գալգըլմըլ իսէտէ, Պապը Ալինին հէր շէյի եէրլի եէրինճէ կէօսթէրմէսի իւզէրինէ, նազըր իգթիզադընը իճրա իտէճէկինի վատ իթմիշ տիր :

Լէհօպատա 24 քիշիլիք պիր ըուժ չէթասը իլէ միւտարէպէ վուգու պուլտըղընը թիւրք էլիսի Աթինա հիւքիւմէթի կէօսթէրմիշ տիր : քէզա եէնի թէշքիլ օլընա կէլէն չէթալարա հանկը զապիթլէն գօմանտա իտէճէկի վէ չէթալարըն նէրէտէ պուլընտըգլարը իսպար օլընմըլ :

—13 քիշիլիք պիր սըրօյէթասը փետր. 23 տէ Բրիլէպ գալասընտա ասքէրլէր իլէ վուրուլմուլ օլուպ, Սըրպլարտան ալթըսը էօլմիւլ վէ պիրի թութուլմուլ տըր :

—Մաքէթոնիանըն սէր միւքէթիշի Հիւմի րաշա վէ էնէպի միւլքիյէ մէմուրարը թարափընտան թէրթիպ օլընան պիւտճէ ճէտվէլի Պապը Ալիյէ կէօնսէրիւմիշ տիր :

Իշպու ճէտվէլ մուճէպինճէ իւլ Վիլայէթին 1322 սէնէսի իշիւն 267,891,756 զըլ, մէսարիֆի օլաճազ, եանի կէլէն սէնէնին իքի մէսլինտէն տահա զիյատէ : Պու մէպլաղտան վարիտաթը թէնզիլ իտէրէք 92,255,636 զըլ, ալըգ գալիյօր, իշպու ալըղը Պապը Ալի էօտէյէճէք 4 թագսիթտէն :

ՐՈՒՍԻԱ

Ջանկտիտի գազասընտա կիւրճի քէօյիլէրին թէրքի սիւլաճ իտէրէք իթաաթա կէլմիշ օլտըգլարը թիքիլիստէն պա թէլէկրաֆ պիւտիլիյօր :

—Ժէնէրալ Կրիազնուլըն գաթիլի իտալ օլընմըլ :

—Պիւլէսթօքտա էշգընալար պիր պանգալա կիրուպ բարա իսթէմիշէր, ճէվապը ըէտտ ալմալարը իւզէրինէ տիրէթօրը էօլտիւրմիւլլէր վէ պիր մէմուրը եարէլէյուպ գաշմըլլար :

—Մէճլիսի վիւքէլա սօն պիր գարարլէ, Եհնուտիլէրէ զուլմ ու թէճալիւզաթ իտէնլէրէ գարըլ շէտիտ թէտպիլլէր իթթիլաղ օլընմասընը էմր իթտի :

—Հօմէրտէ Եհնուտիլէրի խըրբալթիւլարըն վէ քէզա սէյիթի կիպի ֆիթուրըզ գալան մէմուրարըն թահթը մուհաքէմէյէ ալընմալարը էմր օլընտը :

ՍԵՐՊԻԱ

Սերպիանըն տախի եէնի գապինէսի թէշէքիւլ իթմիշ տիր : Ժէնէրալ Կրիշ Վիւքէլա րէյիսի վէ հարպիյէ նազըրը, Մ. Անթօնիշ խարիճիյէ, Բալլէվիշ տախիլիյէ նազըրը օլտուլար :

—Պուկարիա վէ Սերպիա պէյնինտէքի թիճարէթ ահտնալէսինին միւտտէթի մարա 1 տէ խիթամ պուլմուլ տըր : Եէնի կէօմրիկ իթթիհատը իսէ էլան Սերպիա Սգուպչինասընտան թաստիգ օլընմատըղը ճիհէթլէ, իքի մէմալիք պէյնինտէքի թիճարէթ մուամէլէլէրի մուալլազ վէ միւլէվիլէ պիր հալ քէսպ իթմիշ տիր :

ԱՃԷՄԻՍՏԱՆ

Սթանպուլ—Աճէմ իլթիլաֆը եազընտա հալլ օլընմազ կէօ-

նիւլիյօր, զերա թիւք հիւքիւմէթի միւնաղալը օլան արազիտէն ասքէրինի չէքէճէկինի վատ իթմիշ տիր : Սինօրարը թային իթմէք իշիւն մուրախասլար կէօնտէրմէքտէ տիր : Աճէմ թօրաղընտա թիւրք ասքէրլէրին վէրտիլէրի զիյանընըն թագմինինի իրան հիւքիւմէթի թիւրքիտան թալէպ իտէյօր :

Ր Ո Ւ Մ Ա Ն Ի Ա

Եռնանի վէ Րուսիա հիւքիւմէթիլէրի պէյնինտէ պօզկուլուգ տէվամ իտէյօր : հէր իքի թարաֆ քէնտիլէրինէ մագսէտ թային իթտիլէրի նօգթատան վազ կէլմէյօրար : Րուսլարըն մագսէտի թիւրքիտա պուլընան Բուցօ—Ուլաշլարը զօր իլէ ըուժ իթմէք տիր : Րուսլէն հիւքիւմէթի իսէ հէր պիր ֆէտաքեարըլլէ թիւրքիտաքի Բուցօ—Ուլաշլարը, Յնցարլարը ըուսէն միլլէթինէ րապթ իթմէք մագսէտինէ խըտմէթ իտէյօր : Շուրասը մուճիպի թէէսիւֆ տիրքի Րուսլար զօր իլէ անլէրի Րուս իթմէք իսթէյօրար վէ գարըլ կէլէնլէրի տախի գօրգութմագ, էօլտիւրմէք կիպի վաշիլիլէրէք միւրաճաաթ իտէյօրար : Իշթէ պու սէպէպլէ Րուսիան հիւքիւմէթիին հիտտէթի կիթտիքէ արթիյօր :

Հիւքիւմէթտէն մաատն Րուսիան էհալիսի տախի բէք գըզմըլ վէ հիտտէթլէնմիշ տիր : Կէլէն հաֆթա Պուգրէշտէ կիճէ վազթը 50 գատար մէքթէպ չօճուգլարը թօլանուպ Րուսլարա գարըլ նիւմայիշ եարարազ՝ Եռնանի էլիլիսանէսի վէ քիլիսէսի էօնիւնտէ էօլիւն Րուսլար, Եաշասըն Րուսիան պաղըրտըլար : Աստրիա հիւքիւմէթի իքի տէվլէթ պէյնինտէ պարըլմայա վասիթա օլիյօր իսէտէ, չիմտիլիք պիր սէմէրէ հասըլ օլմամըլ տըր :

ՅՐԱՆՍԱ

Բարիլտէն ալընան թէլէկրաֆար վէ կազէթալար բէք տէհչէթլի պիր գազատան պահս իտէյօրար : Գուրիէր մատէն օճազլարընտա զուհուր իտէն պիր գազատան 1800 քիշի թէլէֆ օլմուլ տըր : Պուկարա վէ ֆամիլիալարընա եարտըմ իշիւն իանէ տէֆթէրլէրի քիւշատ օլընմըլ տըր : Ճուճուրիյէթ րէյիսի 10,000 ֆր, մէճլիսի ալան 500000 ֆր, վէ միւնիթթիլէրին հէր պիր պէշէր եիւլ ֆր, իտէն վէրտիլէր : Պուգրէշտէ տախի էէնտ Րուսլէն կազէթալար իտէն սիւթիւնիալմըլ տըր :

—Գուրիէլ մատէնինտէ վուգու պուլան գազանըն սէպէպլէրինի թահգիգ իթմէք իշիւն Բարիլ-

տէն պիր գալիսիյօր մախուս կէօնտէրիլմիշ տիր :

Օլ ճիվար մատէնլէրինտէ շալըլմագտա օլան իշիլէր իշի թաթիլ իտէրէք, ֆազլա կիւնտէլիք թալէպ իտէյօրար :

—Ֆրանսանըն եէնի գապինէսի թէշէքիլ օլընմըլ պիթմիշ տիր : Մ. Սարիէն վիւքէլա րէյիսի, Մ. Պուրթուա խարիճիլէ, Մ. Գըլէմանսօ տախիլիյէ նէզարէթիին տէրէհտէ իթտիլէր :

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ,	4 Մարտ
ՉԱԽԻՐԷ	
ՊՈՒՂՏԱՅ	
Վալօն	54-60 լիպ. 9.80/11. 20
Արապա	52-62 լիպ. 9.60 /11. 60
ԱՐԲԱ,	
Վալօն 100 քիլօ	12. /12. 40
Արապա	42-47 լիպ. 7. / 7.20
ԵՈՒԼԱՅ արապա	33/36 լիպ. 5. 20/5. 60
Վալօն 100 քիլօ	12. 20/12. 85
ՖԱՍՈՒԼԵՆԱ արապա	100 քիլօ 20—22
ՌԱԲԻՑԱ	100 քիլօ
Արապա	100 քիլօ քիլօ
ՏԱՐԸ արապա	10.20/10. 60
ԲՈԼՈՂ արապա	55-60 լիպ. 11./12
ՄԻՍԻՐ 57-58 լիպ.	առապա 8. /8.20
» 100 քիլօ	10. 80/11.
ՉԱՎՏԱՐ արապա	8. 50/8. 70
» 100 քիլօ	13. /13. 50
Կիւնտէ 40—50 վալօն	վէ 80—100
արապա կէլմէքտէ	վալօն մուամէէսի նաթօլէն20 ֆր. արապա մուամէլէսի նաթօլէն 20. 20
ՍԱՐՐԱՖԻՑԷ	
նաթօլէն 20, 20 ֆրանք	
Օսմ. լիբասը 22, 75 ալթուն ֆրանք	
ՊԱԳԱԼԻՑԷ	
Վարան քեպասընտա պալլալիլէ մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալթուն ֆրանք իլէ :	
ԳԱՂՉԷ	2.20/ 2. 30
ՇԷՔԷՐ Նէմյէ	70
ՇԷՔԷՐ քէսմէլ սանտրօ	36.50
ԲԻՐԻՆՃ ճէնօվա չուվալը	42
» Ֆիլիպէ »	36
» Ինկիլիղ »	29. 50
Բիգօն »	49
ԿԱՉ Սանտրօ	12.50
ՉԷՑԹԻՆ Եաղը քիլօ	1.—1. 10
ԳՈՒՐՈՒ Իւզիւմ	25
Եռնուրթա 100 ատէթի	4. 60

ԼՈՒԾԻՆ ՏԱԿ

ՊՈՒԼԿԱՐ ԱՊՍԱՄԲԱՍԱՆ ԿԵՆԷՔԷ
Այս շատ գեղեցիկ հատոր մըն է թէ պարունակութեամբ եւ թէ կազմով : գինն է 5 ֆր. գրիւլ « Չայն Հայրենեաց » խմբագրութեան :

Թ Ա Տ Ր Ո Ն

ՉԱԼԱ «ՊՈՒԼԿԱՐԻԱ»
«ՕՐԻԱՆԹԱԼ» թատերախումբս վերջինը ըլլալով պիտի ներկայացնէ կերակի գիշեր :
ԽՂՃԱՆԱՐԵԱԼ ԽԵԼԱԳԱՐԸ
տրամ 2 արարուած
Խիստ ծիծաղաշարժ 2 Չաւեշտ
Գ. Յակոբեան

Одговорились А. Курбетиянъ
печатаютъ в Д. Тодорова и С-во—Варна